25/01 - 28204
20.05.09թ.

*ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ*
*«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ*
*ԴԱՇԻՆՔԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ*
*Պ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ*

Հարգելի պարոն Հովակիմյան.

Ձեր 12.05.2009թ. թիվ 021 դիմումի կապակցությամբ, հայտնում ենք, որ ընտրողների նախնական ցուցակները՝ ըստ քաղաքացիների հաշվառման վայրի, կազմվել են ընտրություններից 40 օր առաջ (Ձեզ տրամադրվել է 27.04.2009թ.) և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության անձնագրային ծառայություններ հաշվառում չունեցող քաղաքացիներին ընտրողների ցուցակներում ընդգրկվելու վերաբերյալ հայտեր չեն ստացվել (հաշվառում չունեցող քաղաքացիները, համապատասխան հիմքերի առկայության դեպքում դիմում են ա/ծ հաշվառվելու համար):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ընտրողների ցուցակները ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության անձնագրային ծառայությունների կողմից կազմվում են ընտրություններից 40 օր առաջ (նախնական) և 3 օր առաջ (վերջնական), այդ պատճառով Երևան քաղաքի ավագանու ընտրությունների ընտրողների ցուցակների վերջնական օրինակը Ձեզ կարող ենք տրամադրել 29.05.2009թ.:

*ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ* *Ն.Գ.ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ*